Դրա մասին լսելը հեշտ չէր, սակայն ուրախ եմ, որ արագ բուժվեցի:

Գոնորեա՝

Ինչ պետք է անեք հիմա

Սեռական զուգընկերդ գոնորեայով է վարակվել:

Սա բուժելի վարակ է, որը մարդ կարող է ստանալ սեռական ճանապարհով: Հնարավոր է դուք էլ ունեք գոնորեա:

Զուգընկերդ գոնորեայի դեմ դեղ է ընդունել: Դուք էլ պետք է բժշկի տեսնեք ու սեռային ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) ստուգում անցնեք, և պետք է գոնորեայի բուժման համար հնարավորինս շուտ դեղորայք ընդունեք:

Ահա թե ինչ պետք է իմանաք՝

- Գոնորեան հեշտությամբ է բուժվում: Սակայն թե դուք և թե ձեր զուգընկեր(ներ)ը պետք է հնարավորինս շուտ նշվածի համաձայն ընդունեք դեղորայքը:
- Գոնորեայով կարող եք վարակվել առնանդամով, հեշտոցով կամ անալային սեռական հարաբերությունից: Դրանով կարող եք վարակվել նաև օրալային սեքսից (առնանդամից, հեշտոցից, կամ հետանցքից բերան):
- Շատերը գոնորեայով վարակված են և տեղյակ չեն:
- Ոմանք ցավոտ միզարձակում ունեն, հեշտոցից, առնանդամից, կամ հետանցքից անսովոր արտադրություն, հետանցքից արյունահոսում կամ կոնքի ցավ:
- Բուժման չդիմելը կարող է ձեր մոտ լուրջ խնդիրներ առաջացնել, նույնիսկ անպտղություն:
- Եթե բուժման չդիմեք, հետագայում հղիանալու դեպքում գոնորեան կարող է երեխայի մոտ լուրջ բարդություններ զարգացնել:

Բուժվեք

Ձեր զուգընկերը կարող է դեղ կամ դեղատոմս բերել որ ընդունեք: Ամեն դեպքում կարևոր է, որ ինչպես նշված է հնարավորինս շուտ ընդունեք դրանք:

Գոնորեայի մասին իմացիր ավելին՝

- Զանգեք անվճար 1-800-232-4636
- Կամ այցելեք www.ashastd.org

essential access health

Լուսանկարի անձիք ֆոտոմոդելներ են:
Լուսանկարները միայն պատկերազարդման համար են:

Ահա թե ինչպես ընդունել դեղերը՝

Cefixime (800 մգ)՝ Հենց որ ստանաք ամբողջը ջրով խմեք:

- Այս հաբերը ուրիշին Մի՛ Տվեք:

Մարդկանց մեծ մասի մոտ այս դեղահաբերից կողմնակի լուրջ ազդեցություններ չեն լինում:

- Ոմանք հնարավոր է գլխապտույտ ունենան կամ ստամոքսի խանգարում/լուծ:

Սրանք սովորական խնդիրներ են, որոնք մի քանի օրից անցնում են: Եթե չանցնեն, դիմեք բժշկի: Նաև ձեր բժշկի հետ խոսեք եթե քոր է առաջացել կամ հեշտոցից արտադրություն է լինում:

Հաբերը մարդկանց մեծ մասի համար շատ ապահով են:

Նախքան դեղորայքն ընդունելը խոսեք ձեր բժշկի հետ, եթե՝

- Երբևէ հակաբիոտիկից վատ ազդեցություն, ցան, կամ ալերգիա եք ունեցել:
- Լուրջ հիվանդություն ունեք, օրինակ՝ երիկամի, սրտի, կամ լյարդի:
- Այս պահին դեղագրով այլ դեղ եք ընդունում:
- Հղի եք կամ հնարավոր է հղի լինեք:
- Կծրքով կերակրում եք:

Վերոնշյալ դեպքերում կարևոր է, որ անմիջապես խոսեք ձեր բժշկի հետ՝ իմանալու թե ինչ պետք է անեք:

Եթե գոնորեա ունեցող մեկի հետ օրալային սեքսով եք զբաղվել, հնարավոր է դեղն այդքան էլ չազդի: Պետք է դիմեք բժշկին, որ ավելի զորեղ դեղորայք տա:

Որքա՞ն ժամանակում է վարակն անցնում:

7 օր է տևում: Դեղն ընդունելուն հաջորդող շաբաթվա ընթացքում՝

- Լավ կլինի հեշտոցով, առնանդամով, բերանով, կամ հետանցքով սեռական հարաբերություն ընդհանրապես չունենալ:
- Եթե սեռական հարաբերություն ունենաք, պետք է պահպանակ կիրառեք, եթե ոչ նորից կարող եք գոնորեայով վարակվել:

Անմիջապես գնացեք բժշկի, կլինիկա, կամ Շտապ Օգնություն եթե՝

- Փսխում եք:
- Փորի ցավ կամ սեռային հարաբերության ընթացքում ցավ ունեք:
- Խզզոց/շնչելու դժվարություն ունեք:
- Ցան կամ ջերմություն ունեք:
- Ամորձիների ցավ ունեք կամ այտուցված են:
- Հոդերում ուժեղ ցավ ունեք:

Սա կարող է նշանակել, որ ձեր մոտ վարակն ավելի սուր է և ավելի զորեղ դեղի կարիքն ունեք, կամ էլ հակաբիոտիկից ալերգիկ ռեակցիա ունեք:

Գոնորեայի թեստ անցեք հիմա:

- Թեստը ցավոտ չէ՝ մեզի միջոցով է: Նաև կա անձամբ կատարվող քսուքի թեստ:
- Որևէ մեկը, ով վերջին 60 օրում սեռական հարաբերություն է ունեցել պետք է ստուգվի:
- Եթե դրական է եղել, 3 ամիս հետո կրկին ստուգվեք, հավաստիանալու, որ նորից գոնորեայով չեք վարակվել:

Գտեք ձեզ ամենամոտ կլինիկան՝

- Ձեր զուգընկերոջը հարցրեք որտեղ է ստուգվել, կամ զանգեք CDC թեժ գիծ 800-CDC-INFO կամ 800-232-4636:
- ՍՃՓՎ-ի այլ թեստեր էլ անցեք վստահ լինելու, որ սիֆիլիս կամ ՄԻԱՎ չունեք:
- PrEP -ի միջոցով ՄԻԱՎ-ից պաշտպանվեք, ամենօրյա հաբ, որն օգնում է ՄԻԱՎ-ից զերծ մնալ: